ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE96-62E1-4942-84A5 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/11504/02/25 քաղ. Երևան
3 Նոյեմբերի 2025թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով «ԱԾ-ԱՐ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի՝ «ԱԾ-ԱՐ» ՍՊԸ-ին համատեղ գործունեության պայմանագիր «Իրտիգ» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանի13.10.2025թ. N 3736 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը նշանակելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

հայցվորի ներկայացուցիչը 28.10.2025 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով (այսուհետ նաև՝ Համակարգ) հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի՝ «ԱԾ-ԱՐ» ՍՊԸ-ին համատեղ գործունեության պայմանագիր «Իրտիգ» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանի13.10.2025թ. N 3736 որոշումն անվավեր

ճանաչելու պահանջի մասին:
Ներկայացված հայցադիմումը 28.10.2025 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամալյանին և Համակարգի միջոցով հասանելի է դարձել 28.10.2025 թվականին:
I. Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
II. Հաշվի առնելով, որ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքից պահանջել [ՀՀ-ԱՄՎՀ-ԲՄԽԾՁԲ-25/05] ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
III. Ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներից և հայցի հիմքում դրված փաստերի առանձնահատկություններից՝ Դատարանը կարծում է, որ գործի քննությունը պետք է իրականացնել գրավոր ընթացակարգով:
IV. Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.9-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. «ԱԾ-ԱՐ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի՝ «ԱԾ-ԱՐ» ՍՊԸ-ին [համատեղ գործունեության պայմանագիր «Իրտիգ» ՍՊԸ] գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանի 13.10.2025թ. N 3736 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքից պահանջել [ՀՀ-ԱՄՎՀ-ԲՄԽԾՁԲ-25/05] ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,
3. որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում
4. եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
5. Գործի քննություն իրականացնել գրավոր ընթացակարգով:
6. Պատասխանողին պարզաբանել, որ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է նա, իսկ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացվել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

7. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:
8. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Ազատ Դունամայյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԴԱՏԱԿԱՆ
ԴՈՒՆԱՄԱՅՅԱՆԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am